

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**«ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԻ»**

Հըրեշտակները երկինքէն,
«Փառք ի բարձունս» երգ կ'երգեն,
Դաշնակութեամբ հոգեգրաւ,
Ու կ'աւետէն թէ իրաւ
«Քրիստոս ծնաւ»:

Հովիւներն ալ հիացիկ
Կուգան քարայր մ'ուր փոքրիկ
Մանկիկ մը կայ նորածին,
Կ'ըսեն ապշած եղածին՝
«Քրիստոս ծնաւ»:

Տարաշխարհիկ մոգեր ալ
Համոզումով մ'անայլայլ,
Կուգան Աստղին ետեւէն,
Կը հաւատան ու կ'ըսեն,
«Քրիստոս ծնաւ»:

Թշնամիներն իսկ Անոր
Չեն ուրանար դէպքը նոր,
Հերովդէսներ իսկ գիտեն՝
Աշխարհ գալով երկինքէն՝
«Քրիստոս ծնաւ»:

Բոլոր աշխարհ ցնծագին
Երգէ երգեր իր փառքին,
Աւետելով մարդկութեան
Հուրն այս բարի, փրկածայն -
«Քրիստոս ծնաւ»:

Դուք ալ տըղաք, աղջիկներ,
Ծնունդի երգով խնդաբեր՝
Երգեցէք նոր «Աւետիս»
Թէ մեծ Յոյսը աշխարհիս՝
«Քրիստոս ծնաւ»:

ԳՐ. Հ. Գ.**ՄԱՂԹԱՆՔ**

Ահա՛ եկաւ Կաղանդ բարի,
Այս օրն հասնինք ամէն տարի,
Ի՛նչ հաճելի տօն մ'է Կաղանդ,
Ճոխ նըւէրներն իր՝ մանաւանդ:

Եկէ՛ք նստինք սեղանին շուրջ,
Արդեօք կատա՞կ է այս թէ լուրջ.
Այս ո՛րչափ միրգ, անուշ, շաքար
Աշխարհիս վերջն այսօ՞ր կուգար:

Թո՛ղ միշտ այսպէս առատ սեղան,
Որուն վըրայ բարիք տեղան,
Օրհնութիւնը ըլլայ մեր տան,
Ուր ամէն ոք խաղան, խնդան:

Նըւէրներուն պէս Կաղանդի՛
Թող երկինքէն բարիք թափի
Բոլոր տարին մեզ ամէնուս,
Ըլլանք ուրախ եւ լիայոյս:

Բարի Կաղանդն ահա՛ եկաւ
Ձըւարթ ըլլալ պէտք է հարկաւ:
Բայց չի մոռնանք որքն ու աղքատ,
Աստուած ալ մեզ կուտայ շատ, շատ:

ԳՐ. Հ. Գ.**ՀԱՅ ՏՂՈՒՆ ԿԱՂԱՆԴՉԷՔԸ**

Հայ տըղայ մ'եմ ես ազգասէր,
Փա՛ռք, որ այս մեծ օրուան հասեր՝
Մեծ յոյսերով սիրտս է զեղուն՝
Ապագային համար Հայուն:
Թող ուրիշներ խայտան, խնդան,
Ու իրարու նըւէրներ տան,
Ես այդպիսի չունիմ փափաք,
Կարօտ մ'ունիմ, տենչ մը անյագ:
Ան սէրն է իմ հայրենիքիս,
Անով լեցուած՝ համակ հոգիս,
Արժէք չունի աշխարհ ինձ տան,
Իմ Կաղանդչէքս է Հայաստա՛ն:

ԳՐ. Հ. Գ.